

## ՀԱՀ Սպառողների վստահության համաթիվ


Սպառողների վստահությունն աճել է 2022 չորրորդ եռամսյակում

*Սպառողների գնահատականներն ընթացիկ իրավիճակի վերաբերյալ բարելավվել են: Սպասումները մնում են հոռետեսական:*


ՀԱՀ Սպառողների վստահության համաթիվը 2022 թվականի 4-րդ եռամսյակում աճել է նախորդ եռամսյակի չափավոր անկումից հետո: Ցուցանիշն այժմ կազմում է 108.3 (վերջինիս արժեքը 2021 թվականի չորրորդ եռամսյակում 100 է)՝ 2022թ. երրորդ եռամսյակի 104.8-ի համեմատ: Փոփոխությունը պայմանավորված է Ներկա իրավիճակի համաթվով, որը նախորդ եռամսյակի համեմատ աճել է 9 տոկոսով: Վերջինս պայմանավորված է սպառողների կողմից տնտեսության վերաբերյալ դրական ընթացիկ գնահատականներով, ինչպես նաև գնումներ կատարելու հանգամանքով: Մինևույն ժամանակ, Ապագա ակնկալիքների համաթիվը 2022-ի չորրորդ եռամսյակում նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 1 տոկոսով: Ապագա ֆինանսական պայմանների վերաբերյալ սպառողների ակնկալիքների վատթարացումը ենթահամաթվի անկման հիմնական պատճառն է:

Ինչ վերաբերում է Սպառողների վստահության հաշվեկշռի միավորին, ապա ընթացիկ իրավիճակի նկատմամբ սպառողների վստահությունը դեռևս մնում է ցածր: Ներկա իրավիճակի մնացորդը կազմում է 0.36, որը 0.45-0.55 կայունության միջակայքից ցածր է: Չեն նվազել նաև ապագա զարգացումների վերաբերյալ մտահոգությունները: Ապագա իրավիճակի մնացորդը բացասական է և կազմում է ընդամենը 0.41: Հոռետեսական սպասումները, ինչպես նախորդ եռամսյակում, այնպես էլ այժմ պայմանավորված են ապագա գնումների բացասական հեռանկարով: Ֆինանսական վիճակի և աշխատանքի պայմանների վերաբերյալ սպառողների սպասումներն առավելապես կայուն են: Հարցված տնային տնտեսությունների ավելի քան 70 տոկոսը հաջորդ եռամսյակում այս ցուցանիշների մեծ փոփոխություններ չի կանխատեսում:

### Գծապատկեր 1. ՍՎՀ բաղադրիչների փոփոխությունը նախորդ ժամանակահատվածի նկատմամբ



### Գծապատկեր 2. Սպառողների վստահության համաթիվ



Գծապատկեր 2-ն արտացոլում է սպառողների վստահության համաթվի վեց բաղադրիչների արժեքները և համապատասխան կայունության միջակայքերը՝ ներկայացված ստորին և վերին հավասարակշռության սահմանագծերով: Ստորին սահմանագծից ներքև և վերին սահմանագծից վերև գտնվում են համապատասխանաբար հոռետեսական և լավատեսական գնահատականները:

## Սպառողների վստահության հարցման մեթոդաբանություն

Սպառողների վստահության հարցումն արտացոլում է սպառողների տեսակետներն ընթացիկ և ապագա տնտեսական իրավիճակի և հաջորդ եռամսյակի հավանական զարգացումների վերաբերյալ: Հարցման պատասխաններից դուրս բերված համամասնությունները հիմնված են սպառողի սուբյեկտիվ գնահատականների, ինչպես նաև ընթացիկ և ապագա գնումների վարքագծի վրա:

Սպառողների վստահության հետազոտությունը կազմվել է միջազգայնորեն ընդունված մոտեցման միջոցով, որը միավորում է երկու ենթահաշիվներ՝ ներկա իրավիճակի հաշվեկշիռ (հիմնված տնային տնտեսությունների կողմից իրենց ընթացիկ ֆինանսական վիճակի, գնումների վարքագծի, երկրի ներկայիս տնտեսական պայմանների գնահատման վրա) և ապագա ակնկալիքների հաշվեկշիռ (հիմնված սպառողների՝ կարճաժամկետ հեռանկարում ֆինանսական իրավիճակի ապագա ֆինանսական վիճակի, գնումներ կատարելու մտադրությունների և աշխատաշուկայի պայմանների համար): Հետագա եռամսյակային միավորների փոփոխություններն այնուհետև ներկայացվում են որպես Սպառողների վստահության համաթիվ: Մեթոդաբանության տեղայնացման գիտական փորձարկումից հետո ՀԱՀ-ի Փոլ Ավետիսյան անվան Գործարարության հետազոտությունների և զարգացման կենտրոնը 2022 թվականից հարցումներ է հրապարակում Հայաստանում սպառողների ազգային ներկայացուցչական խմբին (պանելին) եռամսյակային սպառողների դինամիկ Սպառողների վստահության համաթվի հրապարակման համար: Հարցումները կատարվում են հեռախոսով՝ պանելի 2000-ից ավելի մասնակիցներից, որոնք ներկայացուցչական են ՀՀ համար սեռատարիքային և տարածքային (այդ թվում՝ գյուղական և քաղաքային բնակչության) տեսակետից: Որպես բազային արժեք մենք ընտրել ենք Սպառողների վստահության հաշվեկշիռը 2021 թվականի չորրորդ եռամսյակում:

Հարցերի համար, խնդրում ենք այցելել <https://cbe.aua.am/cbrd/#> , ինչպես նաև զանգահարել **+374 60 61 2607** հեռախոսահամարով: